

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
34

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
34

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

34

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Ս. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

*«Բանբեր Մատենադարանի» 34, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ին-տ. Երևան, 2022: 448 էջ (ներդիր 8 էջ):*

*«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են
պատմությունը, բանասիրությունը, արվեստին նվիրված հոդվածներ և այլ նյութեր:*

**ՄԱՇՏՈՑԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀՆԱՏԻՊ
ԳՐՔԵՐԻ ԶԵՈՎԳԻՐ ԵՒ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՆՃՈՒՄՆԵՐԸ
(ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ)*****

Բանալի բառեր՝ Հնատիպ գիրք, ձեռագիր, յիշատակարան, գոյքահամար, կնքագրող, գրող, գրադարանային նշում, հրատարակիչ, տոհմական գրառում:

ՄՈՒՏՔ

Հայերէն հնատիպ գիրքը երկար ժամանակ գոյակցել է ձեռագիր մատեանների հետ¹: Տպագիր գիրքը ստեղծելիս հեղինակներն ու հրատարակիչները հիմնականում այն կազմել են՝ հետեւելով ձեռագրերի ստեղծման աւանդոյթներին: Տպագիր գրքի ժառանգած աւանդոյթներից էր յիշատակարանների առկայութիւնը (գրքի սկզբում՝ տիտղոսաթերթ կամ անուանաթերթ եւ վերջում՝ տպագրիչի)²: Ինչպէս Գարեգին կթղ. Յովսէփեանն է նշում. «յիշատակարանները իրենց բազմատեսակ մանր տեղեկութիւններով մոզայիկի գոյնզգոյն քարեր են, որոնցից արուեստագէտը ի մի բերելով եւ օգտագործելով հարկաւորը իւր նպատակի համար, կազմում է գունազարդ, կենդանի եւ գեղարուեստական պատ-

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ավագ գիտաշխատող, ք. գ. թ., tatevm0505@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ հոկտեմբերի 26, 2022, գրախոսելու օրը՝ նոյեմբերի 17, 2022:

** Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, մատենագետ, ավագ գրադարանավար, sargsyanqnarik@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ հոկտեմբերի 26, 2022, գրախոսելու օրը՝ նոյեմբերի 10, 2022:

*** Այս ծրագիրը յղացել եւ ղեկավարում է Մաշտոցեան Մատենադարանի Զեռագրագիտութեան բաժնի վարիչ, Գլխատըր աւանդապան, պատմական գիտութիւնների դոկտոր Գէորգ Տէր-Վարդանեանը. առ այս տե՛ս նրա նախորդող յօդուածը:

1 Ն. Ոսկանեան, Ք. Կորկոտեան, Ա. Սաալեան, Հայ գիրքը 1512-1800 թթ., Երեւան, 1988, էջ VIII:

2 Տպագրերում յիշատակարանի արժէք ունեն նաեւ հետեւեալ խորագրերով նիւթերը՝ «Առաջաբան», «Մանուցում պայծառ ընթերցողաց», «Առ բարեսէր ընթերցող», «Առ նոր ընթերցողն», «Բան առ ընթերցող», «Վերջաբանութիւն տետրակիս», «Բան թարգմանչի առ ընթերցող» եւ այլք:

կեր»³: Ձեռագիր մատենաներում գրչութեան ժամանակի մէկ կամ աւելի յիշատակարանները «իրատեսակ ոճ ու կառուցուածք ունեցող ձեռագրական արձանագրութիւններ են, որտեղ հակիրճ կամ հանգամանալից տեղեկութիւններ են հաղորդում ձեռագիր գրքերի ստեղծման վերաբերեալ, ցոյց է տրուում, թէ երբ են գաղափարուել դրանք, որտեղ, ում պատվերով, ում կողմից, տնտեսական-քաղաքական ինչպիսի միջնորոտում, հոգեկան, նիւթական ինչպիսի պայմաններում»⁴: Նոյնն է նաեւ տպագիր գրքերի յիշատակարանի պարագան՝ մանրամասն տեղեկութիւններ տուեալ գրքի ստեղծման ու ընթացքի հանգամանքների, տպագրիչի, թարգմանչի, հեղինակի, ժամանակի եւ տպարանի վերաբերեալ:

Ձեռագրերում, բացի գրչութեան ժամանակի յիշատակարաններից, կան նաեւ հետագայում գրուած բազմաթիւ տարաբնոյթ ու տարատեսակ յիշատակարաններ ու յիշատակագրութիւններ, որոնք էլ յստակ ցոյց են տալիս տուեալ ձեռագրի անցած ճանապարհը, բովանդակում նաեւ պատմական, ժամանակագրական տեղեկութիւններ, քաղաքական-ուսումնական անցքեր, յիշարժան դէպքերի ու դեմքերի մասին արձանագրութիւններ՝ «յիշատակարանները տալիս են անգնահատելի նորութիւններ, մանրամասնութիւններ, դէպքերի եւ թուականների ճշդումներ, մեր ներքին, մտաւոր եւ մշակութային կեանքի վերաբերեալ տեղեկութիւններ, որոնց մասին լուծում են մեր պատմիչները»⁵: Փաստօրէն տպագրերը պիտի զուրկ լինէին այսօրինակ յիշատակարաններից, քանի որ գրիչով կամ մատիտով գրելը համարուած էր գրքի վնասում: Եւ ստացուած էր, որ տպագրերի ողիսականը պարզելու ճանապարհը բաւականին բարդ էր՝ պայմանաւորուած ընդամէնը տպագիր յիշատակարանների առկայութեամբ: Սակայն տպագրում առկայ մանր ու մեծ ձեռագիր յիշատակարաններն ու յիշատակագրութիւնները գալիս են օգնելու այդ աշխատանքում: Ն. Պօղոսեանի վկայմամբ 1513 թ. տպագրերում արդեն իսկ տեսնում ենք ձեռագիր յիշատակարաններ՝ Պատարագատետրում՝ «Գրեցաւ ս[ուր]բ տառս ի ՋնԲ. ա[ստուա]ծապահ քաղաքս ի Վէնէժ, որ է Վէնէտիկ Ֆռանկստեան ձեռամբ մէղապարտ Յակոբին. ով որ կարդայք, մեղաց թողութիւն] խնդրեցէք Ա[ստուծո]յ» կամ Աղթարքում՝ «Գիրքս բովանդակ ԻԳ. տետր է, եւ ամեն տետր Ը. թուիսթ է»⁶: Հետագայում ձեռքով գրուած յիշատակարանները տուեալ գրքի պատմութեան անկապտելի մասն են:

ՏՊԱԳԻՐ ԳԻՐԸԸ ՁԵՌԱԳԻՐ ՄԱՏԵԱՆԻ ԺԱՌԱՆԳՈՐԴ

Տպագիր գրքի էջերում յաճախ հանդիպող տարբեր բովանդակութեան հե-

³ Գարեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա. (Ե. դարից մինչև 1250 ք.), Անթիլիաս, 1951, էջ ԺԳ.:

⁴ Հ. Բախչինեան, Հայկական ձեռագրերի յիշատակարանները, Երևան, 1980, էջ 6:

⁵ Գարեգին Ա. կաթողիկոս, նշ. աշխ., էջ ԺԵ.:

⁶ Ն. Պօղոսեան, Հայ հնատիպ գրքերի ձեռագիր յիշատակագրութիւններ (1512-1712), Երևան, 2012, էջ 3:

տաքրքիր յիշատակարանները տեղեկութիւններ են տալիս ոչ միայն տպագրի ուղու, այլև տուեալ ժամանակաշրջանի պատմական իրողութիւնների ու անցքերի մասին, սրանցից զատ կարող ենք տեսնել նաեւ գեղարուեստական անյայտ նմուշներ: Տեղեկութիւնները հետազոտողին օգնում են առաւել յստակ պատկերացում ունենալու տուեալ տպագրի մասին, որպէսզի կարողանայ հասկանալ, թէ տպագիրը տուեալ դէպքում մինչ երեւանի Մատենադարան գալը, որտեղ է գտնուել. գիտական կազմակերպութեան, թէ՛ որեւէ անհատի անձնական գրադարանի մասն է եղել:

Տպագրում առկայ ձեռագիր յիշատակարանների մի առանձնահատկութիւն եւս նշենք. եթէ միեւնոյն գրքի բոլոր օրինակներում տպագիր յիշատակարանները նոյնն են, ապա ձեռագիր յիշատակարանների դէպքում այլ է՝ դրանք տարբեր են:

Շեշտենք, որ ձեռագրերի գրչութեան յիշատակարանները համարժէք են հնատիպ գրքի տպագիր յիշատակարաններին, իսկ հետագայում գրուած յիշատակարանները՝ տպագիր գրքում ձեռքով գրուած յիշատակարաններին: Հնատիպ գրքերի ձեռագիր յիշատակարանները գրութեան տարածուած ու աւանդական կաղապարներ չեն ունեցել: Գրիչները ստեղծագործել, յօրինել ու շարագրել են ըստ իրենց կարողութեան ու գիտելիքների եւ ազատ դրսևերմամբ. տպագիր գրքի ձեռագիր յիշատակարանները կրկին նոյնանում են ձեռագրերի հետագայում գրուած յիշատակարանների հետ: Ստացում է, որ ձեռագրից ժառանգած աւանդոյթը, անկախ գրիչներից, հեղինակներից ու հրատարակիչներից, շարունակում է նաեւ այս դէպքում: Իսկ հետագայի յիշատակարան գրողները եւ ձեռագրերում, եւ տպագրերում հիմնականում միեւնոյն մարդիկ էին՝ տէրերը, գնորդները, ստացողները, նուիրատուներն ու նորոգողները, որոնք, բացի պատմական իրադրութիւններից, զանազան կենցաղային դրուագներից, անում էին նաեւ իրենց տոհմերին եւ ընտանիքներին վերաբերող տարեգրական գրառումներ: Տպագրի էջերում հանդիպում են մի շարք յիշատակարան-յիշատակագրութիւններ, որոնք տեղեկութիւններ են տալիս գրքի պատկանելութեան, նաեւ գնման, նուիրման եւ նորոգման վերաբերեալ: Պատերազում տալու համար բերենք մի քանիսը.

ա. Մի շարք հնատիպերի էջերում յստակ նշում են տէրերը՝ «Տեառն Ղազարու վարժապետ վարդապետին է գիրքս»⁷ (ՄՄ Հ^մ 9, էջ 1), «Տաղարանս այս տիրացու Սիմէոնինս է» (ՄՄ Հ^մ 95, էջ 3), «Այս գրքոյկս Աբրահամ վարդապետինայ» (ՄՄ Հ^մ 98, Պհպ. Աս), «Книга принадлежит Семону Коха

⁷ Բնագրային մէջբերումները արել ենք նոյնուպեամբ՝ պահպանելով աղբիւրի ուղղագրական հարազատութիւնը, սակայն կէտադրել ենք ըստ մերօրեայ կանոնների: Ուղղագրական շեղումները նշում ենք սխալ տառ(եր)ի ընդգծումով: Հաշի առնելով ուղղագրական սխալների փանակը՝ ընդգծումով տարբերակում ենք առաւել ակնառուները: «ՄՄ Հ^մ» ձեռով շարագրանքի մէջ նշում ենք Մատենադարանի հնատիպ գրքերի հաւաքածուի կարգային գոյնահամարները:

Бадалу» (ՄՄ Հ^մ 137, Պհպ. Բբ), «Книга принадлежит ученику I а кл.» (ՄՄ Հ^մ 148, Պհպ. Աա) եւ այլն:

բ. Յիշատակագրութիւններ կան, որոնց մէջ գնորդները որոշակի մանրամասներ են նշում գնման հանգամանքների վերաբերեալ՝ «Զաքարիա վարդապետ Յօշականցի, իմ ստացեալ դրամով գիրքն է» (ՄՄ Հ^մ 8, էջ 1), «Յիսուս Որդիս է նուաստ Բեթլէհէմ վարժապետինս, զորմէ գնեալ ունիմ ի Գիանջայունն, թուոյ 1829, ապրիլի 13» (ՄՄ Հ^մ 137, Պհպ. Աա), «Յիշատակ է այս սուրբ գիրքս քարոզի, որ կոչի Ալբերթ, որ առայ ես՝ Ալէքսան երեցս, իմ հալալ ընչիցն, եւ ետու նիկողայիոս վարդապետին, որքան որ կարդայ, պարտական է, որ ասէ Աստուած ողորմի տէր Ալէքսանի կողակից իսթունին հոգոյն, Աստուած ողորմի կարդացողաց եւ ողորմի ասացողաց հոգոյն. ամէն» (ՄՄ Հ^մ 307, Պհպ. Բբ), «Յիշատակ է այս վիպասանութիւնս տէր Ալէտիսին, տէր Դաւիթին, որ առեցի նուխի քաղաքն. ամէն օվ որ կարդայ, մէկ բերան Աստուած ողորմի ասի, Քրիստոս Աստուած ձեզ ողորմի. ամէն» (ՄՄ Հ^մ 447, Պհպ. Բա) եւ այլն:

գ. Ստացողների յիշատակագրութիւնները յաճախ չեն մանրամասնում գրքի ստացման եղանակները՝ թէ ումից եւ ինչպէս տուեալ գիրքը իրենց հասաւ. «1811 թիւ եւ մայիսի Զ. ըն սոյն վիպասանութեան գիրքս ստացայ ի Սեւանու Գրիգոր վարդապետի ընչիցն, շնորհիւ նորին ամենաբարձր սրբազնասուրբ վեհապետութեանն եփրեմայ» (ՄՄ Հ^մ 51, Պհպ. Աա), «ՌձԿե. (1716) ես՝ Դանիէլ վարդապետս, ըստացայ զգիրքս զայս ի վայելումն ինձ՝ ծառայիս Աստուծոյ» (ՄՄ Հ^մ 204, չհ. էջ 28), «Ստացող սորին զՅակոբ վարդապետս յիշեսչի՛ք ի բարին» (միակազմ ՄՄ Հ^մ 2432, էջ 2), «Ըստացա զայս գիրքս տիրացու Դաւիթս, որ գոչի գիրքս Տօնացոյց, 1859, ի վայելումն անձին իմոյ տիրացու, որ եմ միաբանն սրբոյ ուխտիս Սեւանու» (ՄՄ Հ^մ 233, Բ. կազմաստառ) եւ այլն:

դ. Ի տարբերութիւն ստացողների, նուիրատուները յիշատակարաններում նշում են, թէ ինչու են տուեալ գիրքը նուիրել այս կամ այն մարդուն կամ վարժարանին: Հիմնականում դրանք ուսման եւ առհասարակ անձնական գործածութեան նպատակով են՝ «Այս Ազամգիրքն է Գէորգ Պետրոսեան, ընծայեցի որդոյ իմոյ Յակոբին, Աստուած բարի վայելումն տացէ, 1853 յ2/8» (ՄՄ Հ^մ 77, Պհպ. Աա), «1797, յօգոստոսի մէկումն, որ այս Ոսկիփորիկ գիրքըս իմ եղբայր Գէվորք վարդապետն ինձ շնորհեաց, որ կարդամ, հասկանամ գրեալն եւ սիրտըս շահվի, թէ ես եւ թէ եղբայրք իմ, որ չի ծախվի, մնայ մեզ մօտ մեր եղբօր յիշատակ, իբր ձեռաց նշան. ծառայ Պաղտի Տէր-Աթամեան» (ՄՄ Հ^մ 92, Պհպ. Աա), «Ընծայեցի զայս Տաղարան՝ զարարեալն Պետրոս վարդապետէ Ղափանցոյ, Մովսէս սարկաւազի Գրիգորեան Համազասպեանց հարազատ հոգեորդոյ գիտնական Ստեփաննոս եպիսկոպոս Զմիւռնացոյ, ի նշան անմոռաց բարեկամութեան, ի գնալն իմ ի Ս. Պետրբուրգ» (ՄՄ Հ^մ 95, Ա. կազմաստառ), «Յիշատակ է քերականութեան երկրորդ հատորս հանգուցեալ Յովսէփ կաթողիկոսին, զոր ետ Դաւիթ սրբազան կաթողիկոսն ի վայելում նորակերտ վարժարանին, ՌՄ[Ծ]. (1801)»

(ՄՄ Հ^մ 177, էջ 305), «Ընծայեցաւ այս գիրք քերականութեան ի Մկրտիչ տիրացուէ հոգեւոր եղբօր սիրեցելոյ ի ձեռս իմ՝ տէր Պետրոս արեղայիս, իբր նշան սիրոյ եւ յիշատակ բարի, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, ի թուին ՌՄԺԱ. (1762) եւ ի փետրվարի ամսոյ Ժ.ին» (ՄՄ Հ^մ 200, Պհպ. Բա), «Ի ՌՄԿէ. (1818) թուին, յամսեանն յունիսի, ես՝ տրուպ եւ անպէտ Մխիթար եւեթ արեղայս, յիշատակ ետու զքերականութիւնս զայս հարազատ զաւակին՝ աւագ սարկաւագին սուրբ Սեւանայ անապատին, հոգւոյս հատոր Կարապետին: Ձոր ի յընթեռնուլն եւ ի շահիլն ի սմանէ մէկ Հայր մերիւ յիշեսցէ զԵղիսաբեթ քոյրն իմ՝ զփոխեալն առ Աստուած, զի նա էր ընծ[այ]եալ ինձ, եւ ինքն յիշեալ լիջիք յԱստուծոյ՝ ընդ արդարոցն դասուց» (ՄՄ Հ^մ 236, Պհպ. Աբ), «Ես՝ Սրբոյ էջմիածնի միաբան, տեղապահ եւ շօնօթեցի Մկրտիչ վարդապետս, ետու յիշատակ զայս գիրքս հոգեծնի որդեկին իմոյ Գանիէլ վարդապետին, ի վայելս անձին իւրոյ, ի ՌՄԻԸ. (1779) թուին, յունվարի մուտն» (ՄՄ Հ^մ 324, էջ 7), «Գերազնիւ պօլիովնիկ սարճ Բօբերթ Պօրթէր, իմ անգին բարեկամ — Ի նշանակ իմանալի շնորհաց տաճարին Աստուծոյ Սրբոյ կաթողիկէ էջմիածնի Արարատեան աթոռոյն հայոց եւ մերս, իսկ անմոռաց սիրոյ ընծայեցի ձեզ պարգեւ գեղեցիկ զսոյն զայս Պատմագիրք Հայոց՝ արարեալ ի մեծ վարդապետէն մերմէ Սովսիսէ Խորենացոյ, որպէս զի իմաստասիրելով ձեր ի սմա, անմոռաց ունիջիք զիս՝ զաղօթարարս վասն անգին կենաց եւ յաջողութեան ձերոյ. յամի Տեառն 1817, նոյեմ. 20, ի Սուրբ էջմիածին, որ յԱրարատ, պատրիարզ ամենայն հայոց եւ կաւալեր ռուսաց սրբոցն Աննայի եւ Աղէքսանդրի Նեւսկոյ առաջին աստիճանաց Եփրեմ» (ՄՄ Հ^մ 390, տիտղթ. դարձերես) եւ այլն:

Ե. Կան հազուադէպ յիշատակագրութիւններ՝ գրքի արտաքին վիճակի նկարագրութեամբ, որոնք թողնում էին նորոգող-կազմողները՝ «Զի 31 հոգտեմբերի, ես՝ Մարտիրոս քահանայ, տէր Յակոբին կազմեցի զայս Առաքել պատմագիրք իմոյ յիշատակ, բայց վերին գլխէն պակաս է Ի. (20) թուղթ» (ՄՄ Հ^մ 328, Պհպ. Բբ):

Հնատիպ գրքերում առկայ ձեռագիր յիշատակարաններն ու յիշատակագրութիւններն ունեն բովանդակային բազմազանութիւն. դրանք պարունակում էին ժամանակի հասարակական ու քաղաքական անցուղարձի, պատմական իրողութիւնների, կենցաղի, հոգեւոր կեանքի վերաբերեալ տեղեկութիւններ: Իսկ տոհմական-ընտանեկան տարեգրութիւնները յաճախ հանդիպում են այնպիսի մանրամասներով, որ կարելի է կազմել տուեալ գերդաստանի տոհմաձառը: Ինչպէս Գ. Յովսէփեանն է դիտարկում. «յիշատակարաններով պիտի պարզուին հայ մանրանկարչութեան պատմութիւնը. մեր ներքին, մտաւոր եւ մշակութային կեանքի այլ եւ այլ երեւոյթները. նոյն իսկ տնտեսական, փոխարժէքների, հարկապահանջութեան վաճառականութեան եւ այլ բազմաթիւ խնդիրներ»⁹: Յի-

⁸ Ըստ ամենայնի սա «SIC» դիմելւածէի հայերէն տառադարձումն է:

⁹ Գարեգին Ա. Կաթողիկոս, նշ. աշխ., էջ ԺԳ.:

շատակարաններն օգնում են լուսաբանել հոգեւոր ու պետական գործիչների կեանքի ու գործունէութեան վերաբերեալ տուեալներ: Պայմանականօրէն առանձնացրել ենք հետեւեալ նմուշները՝

ա. Պատմական իրադրութիւններ, փաստեր պարունակող յիշատակարաններ՝ «1827 ապրիլի 12ին ամենայն եղեալ բազմութիւնքն Երեւան քաղաքիս մտեն ի ամրոցի աստ: Դարձեալ սոյն ամի եւ սոյն ամսոյ 24ին հզօր զօրքն ռուսաց եկեալ պատեցին շուրջ զքաղաքաւ յերեւանայ» (ՄՄ Հ^մ 77, Բ. կազմաստառ), «Վասն որոյ աղաչեմ զձեզ, եղբա՛րք, հնազանդ լինիք մերոյ ու մեր հայոց ազգ եւ ընդունեց եւ բարէկամեաց ողջուն խնդրեալ ի գրամէն, նաեւ Մարտիրոս Յարութիւնեան, որ անւանի Յարբիչիմ, 1833 մարտի 4ին, ի Չորագեղն» (ՄՄ Հ^մ 149, Պհայ. Բա), «Ի թվին ՌՄԺ.ին (1761) ԼԸ. (38) տարի էր, որ Իրանայ թագաւոր շունէր, էս թրեղիս պարապ աղու եկին Նախշուվանու բնիրդարան ոմանց ասել թէ փատիլն Մ. (50) դահեկան է, հրեշտակացեալ մարմնով ի կարգս անմահութեան Մկրտիչ Գ., վիճակեալ ի հրեշտական մարմին եւ գերափայլուն վարուք սրբութեամբ Մկրտիչ երջանիկ վարդապետ յաճաշնորհ եւ գիտնական» (ՄՄ Հ^մ 383, Պհայ. Բբ), «Թվին հայոց ՌՅԼԶ. (1887), ի ժամանակի կայսեր ռուսաց Գ. Ալեքսանդրի եւ կաթողիկոսի ամենայնի հայոց տէր-տէր Մակարա, նոյն թագաւոր կայսր առեալ Ի.ամենից (20) երիտասարդ ազգես հայոց զինուորս վիճակարութեամբ: Ամ ըստ ամէ գրեցաւ ձեռամբս տրուպ քահանայից տէր Սուքիաս Նահապետեայ, որ ի սերընդոյ Ստեփաննոսի Վրթանէսեան Մէլիք-Շահումեանց, ի գեղջէն Վերին Ղարանլուխ, գաւառն Գեղամայ, որ է նոր Պայեազիտ, առ եգեր[ոյ] ծովուն անապատին Սեվանայ, որ էր վանահայր Կարապետ վարդապետ Բիւլբիւեան» (ՄՄ Հ^մ 408, Պհայ. Գբ) եւ այլն:

բ. Կենսագրական յիշատակարաններ. պատմական անձնաւորութիւնների՝ «Մխիթար վախճանեցաւ 1213/662 եւ թաղեցաւ Գետիկ անուն վանքում: Վերոյգրեալը Վահան վ. Բաստամեանցի գիրն է, որը հրատարակեց Գօշ Մխիթար, Սահակ վ. Ամատունի» (ՄՄ Հ^մ 412, էջ 96), տարբեր մարդկանց՝ «Ես ողո[ր]մելի եւ մեղսամած Սա[ր]գիս Խա[չա]տուրեան 10 եւ 5 ամ այս սուրբ Սեւան անապատիս մնացի, զամենայն աւուր իմ լըքեալ եւ ծովութեամբ անցուցի, ո՛վ բարեսէր եղբայրք, ընթեր[ցողք], թողութիւն խն[դ]րեցէ՛ք յԱստուծոյ վասն իմ մեղաւորիս, Աստուած եւ ձեզ ողորմեսցի. ամէն» (ՄՄ Հ^մ 108, Պհայ. Աբ), «Ի 1838ն ամի 20 հոկտեմբերի ես՝ Բարսեղ Երիցեանս, մտի ի ծառայութիւն նորին կայսերական բարձրութեան Նիկօլայ Պավլովչի ի դատարանն, որ կոչի նահանգական, այսինքն՝ Ուեզդնի սուտ» (ՄՄ Հ^մ 276, Պհայ. Աբ) եւ այլն:

գ. Տոհմական-ընտանեկան տարեգրութիւն՝ «Թվին 1220 (1771), յունուվարի 18 օրըն ես՝ մեղաւոր տիրացու Թորոսըս, որ հարսանիք ար[ար], Աստուած վերձըն ի բարին կատարեսցէ. ամէն: Թվին 1221 (1772) յունուվարի 15 օրն, որ ծընաւ որդին իմ Պօղօս, Աստուած մընացական արասցէ. ամէն» (ՄՄ Հ^մ 36, էջ 2), «Թիվին ՌԲՃԶ. (1757), ապրելի Ե. օրումըն Աղէքսանդրըն ծնաւ ի մօրէ, որ

էր եկեղեցուն նորոյքումըն, Աստվածձածին ինքն պարիխօս լինի. ամէն» (ՄՄ Հ^մ 94, Պհպ. Բա), «Ի ՌՄԿԳ. (1814) թուոչս եւ ի մտին յունիսի յաւուրն Բ. շաբթի ծնաւ ներսէսն ի մօրէ եւ ի յաջորդ շաբթի աւուրն ի տօնի ներսէսի Մեծի հայրապետին մկրտեցաւ յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Իրի եւ կոչեցաւ ներսէս, որոյ շնորհեսցէ Տէր զկեանս ընդ երկայն աւուրս՝ վարժելով ի կամս իւր եւ տացէ իմաստութիւն, զգօնութիւն շնորհիւ ամենագօր խաչին. ամէն» (ՄՄ Հ^մ 231, էջ 2), «1910, յունիս 8, երէկ ժամ 10. 1/2 ծնաւ Մէսրօվբե Մուրատեան Աւետիսի որդի, կնքուեցաւ եւ կնքայ քահանայ հ. Պ. վարդապետ Գարագաշեանց, կնքահայր Ս. Մալուրէանց, ի Սլաւէնակի հանգային շուր» (ՄՄ Հ^մ 394, էջ 804), «եղեւ թվին ՌՄԵ. (1756) ամին, դեկտեմբերի ԺԴ.ին, որ մեր Յակոբ մօրից ելաւ սուրբ Յակոբայ պաս շաբթի Ե. շաբթի օրն, եղեւ թվին ՌՄԹ. (1760) ամին փետրվար Ի. (20) օրին մեծ պահոց առաջի շաբթի շորեքշաբթ օրն մեր Ըստեփան մօրից ելաւ, եղեւ թվին ՌՄԺԱ. (1762) ամին մեր Գորիանէն մօրից ելաւ, եղեւ թվին ՌՄԺԳ. (1764) ամին մարտի ամոց ԺԵ. (15) օրին մեր Յարութիւն մօրից ելաւ, թվին ՌՄԻԳ. (1775) ամին օգոստոսի Ժ. օրին, որ լուսաւորեալ հոգի Ըստեփան փոխեցաւ ի Քրիստոս, թվին ՌՄԻԵ. (1776) ամին, յուլիսի Ժ. օրին մեր Գարանէն հանգաւ ի Քրիստոս» (ՄՄ Հ^մ 493, էջ 294), «Իմ որդի Մկրտիչը ծնեց 18 յունվարի 1864 ամի, վախճանեց՝ 25 մահիս 1869: Ես՝ դպիր Վարդանս, ամուսնացայ 19 յուլիսի 1865 ամի: Չորրորդ աստիճան առայ 25 ապրելի 1859 ամի, Յարութիւն եպիսկոպոսին Կարնեցոյ, հրամանաւ տեղակալի Սուրբ Կայեանեի վանից: Յարութիւն Աւետեան ծնեալ ի 5 մայիս, եւ Մկրտիչ 8 մահիս 1860 ամի» (ՄՄ Հ^մ 274, Ա. կազմաստառ) եւ այլն:

դ. Կենցաղային բնոյթի յիշատակագրութիւններ, որոնք իրենց հերթին տարատեսակ բովանդակութիւն ունեն՝ օրինակ ունենք բնութեան երեւոյթները (բնական աղէտ, խաւարում) ներկայացնող յիշատակագրութիւն՝ «Մաստիկ հողմ եղեւ ի ՌՄՆԱ. (1792) թուոչս եւ ի հոկ. Գ. յաւուր կիրակէի երեկոյի, Տէր փրկեսցէ զմեզ ի փորձանաց» (ՄՄ Հ^մ 8, Պհպ. Գա), «Ի թուին հայոց ՌձՂէ. (1748), ի յուլիսի ԺԴ. (14), ի վեց ժամուն խաւարեցաւ արեգակն եւ տեւեաց մինչ ցրկէս ժամ եւ փոքր ինչ աւելի, որ եւ տեսաք զաստղ իմն մերձ ինքեան բոցափայլի որպէս ի գիշերի, եւ օրն էր հինգշաբթի, Վարդավառի պահոցն» (ՄՄ Հ^մ 307, Պհպ. Բա), «ՌձՀԳ. (1725) յունվարի Լ. ձիւն տեսանք, մինչեւ ցայն ձիւն չկաւ, այսպէս իմա, ո՛վ եղբայր» (ՄՄ Հ^մ 204, Բ. կազմաստառ), «Թվին 1192 (1743), դեկտեմբերի 12, յօրն երկուշաբթի, ի քաղաքը Ախքերման միջօրեայ աւուրբ երեւեցաւ աստղ իմն պայծառ, ակներեւ ամենեցուն արեւմտեան կողման» (ՄՄ Հ^մ 307, Պհպ. Գա), գիւղական ընտրութեան վերաբերեալ՝ «1847 ամին, մա[յ]իսի 30ն մէնք ի նէրքոյ ըստօրագրիալքս Հաչայջրի գիղի բօլօր հասարակութիւնս մէր մէշիցն ընտրեցիմք քօվխայ Ուլուխան Ալիխանօվին եւ վասն օրոյ ըստօրագրէմք» (ՄՄ Հ^մ 13, Բ. կազմաստառ), առք ու վաճառքի՝ «Մարիամի մէ թումանն առա թվին ՌՄԻԱ. (1772), յունիսի մէկին, շահն Բ. շահի ամսենն» (ՄՄ Հ^մ 34, էջ

16), պարտամուրհակներ՝ «Զուռնաշոնց Սարգիսն տարաւ 10 մանէթ ի 27 նոյեմբի 1833 ամի» (ՄՄ Հ^մ 285, Պհպ. Բբ), «Բ. կօտ ցորեն Պէտօն, Բ. կօտ Մխոն, Ա. կօտ Փանոսն, Ա. կօտ Գալօն, Ա. կօտ տէր Կարապէտն» (ՄՄ Հ^մ 231, Պհպ. Աբ), «Ա. Ղուրուշ տէր Մինաս վարդապետին մօտն, Յարութիւն վարդապետին՝ ԼԳ. (33) փարայ» (միակագմ ՄՄ Հ^մ 239, Բ. կագմաստառ), «Նոյեմբեր 20ին եկաւ եւ մինչեւ մարտ ամսոյն վերջի հաշուալ 43 ֆրանք կընէ, 4 ֆրանք մի անգամ եւ 19 ֆրանք մի անգամ առնելով իւր առնելիքն 20 ֆրանք կընէ, ապրիլի մեկէն հաշուեալ, 5 ֆրանք եւս առաւ Սրբուհուն տալիքին համար, Ս. Կանայեան» (ՄՄ Հ^մ 293, Պհպ. Աբ), անձնական կեանքի այս կամ այն կարեւոր իրադարձութեան մասին՝ «Յշտկբիժ վտ եբփբտ¹⁰ = Յիշատակ իմն տէր Զաքար: 1820 յուլիսի 15ին գնացի անօրս տունն, որ Նուեմզարն իւրեանց տանն էր: Սոյն թուին յուլիսի 26 մատանիս մատս, առանց պատճառի օղն կոտրվեց» (ՄՄ Հ^մ 51, Բ. կագմաստառ) եւ այլն:

Ե. Հոգեւոր կեանքի վերաբերեալ կարեւոր փաստեր. ձեռնագրութեան՝ «Ի ՌՄՆԱ. (1792) թուռչն եւ փէտրվարի ելին օրն մեծի պահոց ե[ր]կրորդ կիրակէին օրհնեցայ ես՝ անարժան ծառայ եւ անպիտան եւ ամենեցուն յե[տ]նեալ սպասաւոր Սահակ եղայ արեղայ ի հոգեւոր հօրէս իմէ, յայինքն՝ Պետրոս աստուածաբան վարդապետէ, որոյ Տէր արժանիս արասցէ. ամէն» (ՄՄ Հ^մ 64, Պհպ. Գա), «Թուին ՌՃԽ. եւ է.ին (1698), նոյեմբերի Իէ. (27) ես՝ Թոմասս արեղայ օրհնեցայ ի Թէոդորոս աստուածաբան վարդապետէ, ի Շէնքուշ քաղաքի, ի տոնի սրբոյն Գրիգորի Աքանչեազործին» (ՄՄ Հ^մ 259, Պհպ. Բա), «Ի թուականիս հայոց ///, ի Բարեկենդանի կիրակին յիսնակաց ես՝ Աստուածատուր արեղայս, ձեռնագրեցայ ի Գէորդ վարդապետէն, ի վանս Բալուայ» (ՄՄ Հ^մ 307, Պհպ. Բա), «Ի Յն դեկտեմբերի 1878 ամի ես՝ ի Նուխոյ գաւառի Դաշքուլաղ գեղջ տիրացու Սարգիս Լազարեանցս, եկի ի սուրբ Սեւան վանս եւ ձեռնագրվեցա քահանայ, Աստուած բարի վայելումն տայ եւ տայ այնպիսի կարողութիւն, որ կարողանամ հոլվել զժողովուրդն իմ, առ որս ստորագրեմ նորընծայ Սարգիս քահանայ Լազարեանց» (ՄՄ Հ^մ 317, Պհպ. Բբ), միաբանացանկ՝ «Մահտեսի Միքայիլ վ. Պապասին, Կարապետ վ. Պապասին, մահտեսի Յովակիմ վ. Մըկրտիչ, Կիրեղ վ. Մըկրտիչ, Եղիայ վ. Մըկրտիչ, Խաչերես վ. Քիստոստուր, Վարդերես վ. Քիստոստուր, Փիլիպոս վ. Կիրակոս, Մարկոս վ. Փիլիպոս, Սողոմոն վ. Պետոս, Պարսամ վ. Աւետիք, Գէորդ վ. Աւետիք, Լուսեղէն վ. Պապասին, Պետրոս վ. Խազար, աղպարը Փանոս օր[հ]նէ, Լուսպարոն վ. Կիրակոս, Մելքոն վ. Շահին, Սիմեոն վ. Պաղտասար, տիւլկէր դէմիր, Յուսէփ վ. Դաւիթ, Մանուկ վ. Դաւիթ» եւ այլն:

Գրքերի հետագայ ճակատագրով մտահոգուած գրիչները յիշատակարան-

¹⁰ Այս յիշատակարանի սկզբի հատուածը գաղտնագրուած է փոխարինագիր եւ եղբայրագիր ծածկագրերով, հմմտ. Ա. Աբրահամեան, Հայկական ծածկագրութիւն, Երեւան, 1978, էջ 11-23, 35-47:

ներում ընթերցողներին յորդորում, խնդրում ու խրատում էին չվնասել այն, նաեւ աղօթքներում յիշել ու ողորմի տալ իրենց, պատուիրատու-ստացողներին, գնորդներին եւ արիւնակից հարազատներին: Այսպիսի յիշատակարանները Հ. Բախչինեանը կոչում էր կտակ-յանձնարարութիւններ կամ խրատականներ¹¹: Այսպէս՝ «Յիշատակ է Յիսուս Որդի ի վայելումն Թումանի որդի տ// Յովսէփին, որ առի Շ. (500) շահի, յիշատակ իմ հանգուցեալ ծնողաց, եղբարց եւ քվերց հոգոյն, օ որ կարդա, մի բերան ողորմի տայ, Աստուած իւրերեանցըն ողորմեսցի. ամէն, գրեցաւ ի դրան Սրբոյ առաքելոյն Թադէոսի, Թվին ՌՃՂԹ. (1750), մարտի ԺԶ.ին (16)» (ՄՄ Հ^մ 140, Պհպ. Աբ), «Յարութիւն դպիր արի, / պարկեշտ վարուք առաքենի, / հոգւոյ որդի վարդապետի, / ի Յարութիւն թիլֆիզեցի, / զայս քերականութիւնս ետ քեզ սխարլի, / ի վայելումն անձինդ բարի, / զի հանապազ ինձ յիշելի, / հոգւոյ իմոյ տաս ողորմի, / Աստուած եւ քեզ ողորմեսցի» (ՄՄ Հ^մ 235, էջ 584), «Այս սակաւիկ ձեռագիրս Կարապետի յորդի Միքայէլս գրբեցի, յով որ կարդայ, ասայ Աստուած յողորմի համօրէն հաւասար նընջըցելումն հոգունը. ամէն» (ՄՄ Հ^մ 415, էջ 160), «Այս է գիրս վիպասանութեան տիրացու Դավիթէն տէր Ավետիսին, ես Առաքելըս կրբեցի, օվ կարտայցուք, ողորմի Քրիստոս Աստուած ձեզ ողորմի, պարոն Դաւութ, ես՝ Այստուածատուր Կարապետըն Այքուլեցի Շրխեսցօվ, 1819 թվին յունիսի 23ին գրվեցավ, որ է ի Նուխի, ես՝ Ելիսապետայ-պօլցի Գրիգոր Աթայեանս գրեցի, ի Նուխի, պարոն Դավիթ, հանկ[ուց]եալ Տէր-Ավետիսեան, որ ի Նուխի կայ պնակեալ այժմուս, 1819 յունիսի 23ումն» (ՄՄ Հ^մ 447, Պհպ. Աա), «Թվին ՌՄԻԵ. (1776), մայիսի մէկին ես՝ մեղաւորս Պաղալս, գրեց այս գիրս, օվ որ կարդայ, նա ասի Աստուած ուր ծընողաց հոգին լուսայորի. ամէն: Գրեցի այս ի Թվին ՌՄ.ին (1751), մարտին, ով որ այս նորայթողբոջ գիրքս ընթեռնուք, ասացէ՛ք Աստուած ողորմի իրան, Աստուած ձեզ ողորմեսցի իւր միւսայգամ գալստեան. ամէն: ՌՄ. (1751) երրորդութիւն եւ մէկ ամին կոչմամբ, Հայկայ անուամբ Թվին ի ԺԸ. (18) սեբեմբերի ժոէխ ամսին: Թվին ՌՄԼԱ. (1782) յունիսի Ը.ին» (ՄՄ Հ^մ 493, Պհպ. Աա), «Ի թուոյս ՌՄԾԸ.ին (1809) եւ ապրելի Ժ.ին: Յիշատակ է Ալբերթ գիրքս, որ ես՝ Աւետիք վարդապետս: Ի թուոյս ՌՄԾԹ.ին (1810) ես՝ Դանիէլս, ետու յիշատակ հոգոյ իմոյ եւ ծնողաց իմոց՝ տէր Միքայէլին եւ կենակցոյն եւ եղբարցս՝ վաղաթառամ տիրացու Բարդուղիմէոսին եւ տիրացու Գրիգորին եւ համայն արեանառու մերձաւորացս, որ ետու ի ձեռս Սահրարեան տէր Սահակին ի յիշատակ անջրելի, արդ, որք հանդիպիք եւ կամ ընթերձեալ բան ինչ շահէք ի սմանէ, յիշեսջի՛ք վերոյգրեալքս ի մաքուր յաղօթս ձեր, եւ դու[ք] յիշեալ լիջիք յԱստուծոյ» (ՄՄ Հ^մ 294, Պհպ. Աա) եւ այլն: Հ. Բախչինեանը գրիչների այս աստիճանի մտահոգութիւնը մեկնաբանում էր նրանց յիշատակը յաւերժացնելու ցանկութեամբ¹²:

¹¹ Հ. Բախչինեան, նշու. աշխ., էջ 20:

¹² Նոյն տեղում, էջ 22:

ԳՐԱԳՐԱՆՎԱՅԻՆ ՆՇՈՒՄՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՍԿՉԲՆԱԴԲԻՐ

Տպագրերի անցած ուղու պատկերման հարցում, բացի ձեռագիր յիշատակարաններից ու յիշատակագրութիւններից, կարելոր նշանակութիւն ունեն նաեւ գրադարանային նշումները: Մեր աշխատանքում «գրադարանային նշում» ընդհանուր անուան տակ պայմանականօրէն առանձնացրել ենք հետեւեալ տեսակները՝

- ա. գոյքահամար (մէկից աւելի),
- բ. տարատեսակ արձանագրութիւններ,
- գ. կնքադրոշմ (գրադարանային եւ անհատական):

Իսկ այժմ անդրադառնալով գոյքահամարներին՝ բերենք դրանցից ամենատարածուածները: Առաջին հերթին խօսենք տպագրերի առաջին (անուանաթերթ, տիտղոսաթերթ) եւ 17րդ էջերին նշուած թուահամարների մասին: Բոլոր տպագրերի առաջին եւ 17րդ էջերին նշուած են տուեալ գրքի հին եւ նոր թուահամարները, յաճախ միեւնոյն թուահամարները կան գրքերի մէջքերին կամ առաջին կազմաստառներին սոսնձած պիտակներին՝ 32=1600» (ՄՄ շնր 32), «40=1583=1832» (ՄՄ շնր 40), «52=1974» (ՄՄ շնր 52) եւ այլն: Այս թուերից առաջինը Մաշտոցեան Մատենադարանի գրադարանում տուեալ տպագրի հերթական համարն է, իսկ միւսները արդեն նախկին՝ տարբեր գրադարանների կամ գիտական հաստատութիւնների համարները:

Յաջորդ ամենայաճախ հանդիպողներից են տպագրերի 145րդ էջի կապոյտ թանաքով գրուած թուերը՝ «55b» (ՄՄ շնր 9), «196» (ՄՄ շնր 60), «279a» (ՄՄ շնր 127) եւ այլն, որոնց հիման վրայ կարելի է ենթադրել, որ այդ գոյքահամարներն ունեցող բոլոր տպագրերը եկել են մէկ ընդհանուր գրադարանից, իսկ այդ թուերն էլ տուեալ գրադարանում նրանց հերթական համարներն են եղել:

Գրադարանային նշումներ ենք համարել նաեւ տպագրի պատկանելութիւնը ցոյց տվող մակագրութիւնները, գնման եւ նուիրաբերման արձանագրութիւնները, որոնք օգնում են պարզել տուեալ գրքի նախկինում գտնուելու վայրը:

Օրինակ, մի շարք հնատիպերի էջերին տեսնում ենք այս կամ այն պետական կամ մասնաւոր գրադարանին պատկանելու վերաբերող սոսնձած տպագիր պիտակներ: Այսպէս՝ հետեւեալ մակագրութիւնները փաստում են տպագրերի՝ էջմիածնի ճեմարանին պատկանելը՝ սեւ թանաքով շղագիր՝ «Ի գրոց ճեմարանի Ս. էջմիածնի թ. 19» (ՄՄ շնր 167, Ա. կազմաստառ), «Ի գրոց ճեմարանի Ս. էջմիածնի թ. 35» (ՄՄ շնր 148, Ա. կազմաստառ), «Ի գրոց ճեմարանի Ս. էջմիածնի թ. 36» (ՄՄ շնր 479, Ա. կազմաստառ), «Ի գրոց ճեմարանի Ս. էջմիածնի թ. 44» (ՄՄ շնր 385, Ա. կազմաստառ), «Ի գրոց ճեմարանի Ս. էջմիածնի թ. 10 ջնչած, 76» (ՄՄ շնր 447, Ա. կազմաստառ). եւ այլն, իսկ այս միւսները էջմիածնի ճեմարանին նուիրելու վերաբերեալ են՝ «Նուէր իշխան Գր. Մանուկ-Բէյից, շնր Ա. թուի ճեմարանին» (ՄՄ շնր 10, էջ 1), «Ի նիկողայոսէ Տէր-Յակոբեանց նուէր ճեմարանին

Արբոյ էջմիածնի» (ՄՄ Հ^մ 350, Ա. կազմաստառ), «Ա. է. Գէորգեան Ճեմարանին, Ստ. Կանայեանց, V/LX 1914, Վաղարշապատ» (ՄՄ Հ^մ 26, Պհպ. Աա, ՄՄ Հ^մ 160, Պհպ. Գա, ՄՄ Հ^մ 309, Պհպ. Աա եւ այլն) եւ այլն:

Մասնաւոր նուիրատուներից առանձնանում է Սեդրակ Տէր-Միքելեանը, ով եղբոր կտակի համաձայն բազմաթիւ հնատիպեր է նուիրել էջմիածնի մատենադարանին՝ «Ա. էջմիածնի Մատենադարանին համաձայն կտակի վաղաթառամ դոկտոր աստուածաբանութեան Արշակ Տէր-Միքելեանի, նուիրում է նրա եղբայր Սեդրակ Տէր-Միքելեանը» (ՄՄ Հ^մ 75, Պհպ. Գա), «Ա. էջմիածնի Մատենադարանին համաձայն կտակի վաղաթառամ դոկտոր աստուածաբանութեան Արշակ Տէր-Միքելեանի, նուիրում է նրա եղբայր Սեդրակ Տէր-Միքելեանը, Հ^մ 273» (ՄՄ Հ^մ 143, Ա. եւ Բ. կազմաստառ), «Ա. էջմիածնի Մատենադարանին համաձայն կտակի վաղաթառամ դոկտոր աստուածաբանութեան Արշակ Տէր-Միքելեանի՝ նուիրում է նրա եղբայր Սեդրակ Տէր-Միքելեանը, Հ^մ 9» (ՄՄ Հ^մ 348, Ա. տախտակ), «Ա. էջմիածնի Մատենադարանին համաձայն կտակի վաղաթառամ դոկտոր աստուածաբանութեան Արշակ Տէր-Միքելեանի նուիրում է նրա եղբայր Սեդրակ Տէր-Միքելեանը» (ՄՄ Հ^մ 499, էջ 2բ). եւ այլն:

Հնատիպերի էջերում կան նաեւ մի շարք մակագրութիւններ, որոնք վկայում են նրանց՝ Սեւանի անապատի գրատանը գտնուելու փաստը՝ «Պատմութիւն Դազար Փարպեցւոյ, ի գրեանց գրատան անապատին Սեւանու, 293, Հ^մ 399» (ՄՄ Հ^մ 368, Ա. կազմին սոսնձած պիտակ), «1889 ամի, 20ն հոկտեմ, Դարաշիշակու գաւառի Շահրիզ գիւղաբնակ Նոր-Մալնու դպրատան հինգերորդ կլասի վարժապետ, հրամանաւ նորին մեծ կնեագի Տօնտուկայ Կարգակովիչի Գալուստ Տէր-Յովհաննէսեանցս այս ճարտասանութեան գիրքն իմ աշակերտ յարգելի Մուրատիան Մուրատիսանեանին երկու անգամ բերան բոլորովին դաս եմ տվել: Սա է ի Մարսվանու գրեանցից գերահռչակ, գեղեցկակազմ, արծաթապատ, ոսկեգոյն, ծովափաք կղզոյն Գեղեմայ Սեւան հրաշագոյն անապատից բերեցի եւ յետ տարայ: Վասն որոյ խնդրեմ հանդիպողաց ներողութիւն խնդրել ի Սրբէ Նշանու յաղագս հեռացնելոյ առ գիւղն մեր: Գալուստ Տէր-Յովհաննէսեանց» (ՄՄ Հ^մ 457, Պհպ. Բբ):

Ունենք նմանօրինակ այլ արձանագրութիւններ եւս, որոնք փաստում են տպագրի՝ մասնաւոր անձանց գրադարանին պատկանած լինելը, կրկին՝ ըստ կարգային համարների՝ «Ի գրեանց Ամասիոյ եւ Մարսվանու Յովհաննէս արքեպիսկոպոսի Սեբաստացւոյ եւ յաշակերտէ նորին Մանուէլ վարդապետէ Կիւմիշխանեցւոյ, յիշատակ եղեալք յանապատն Սեւանու՝ առ ի յիշել գհոգիս երկոցունցն. հեռացուցանողքն ի նոյն անապատէ հեռացին ի խնամոցն Աստուծոյ, 1829 նոյեմբեր 1, Մանուէլ վարդապետ» (ՄՄ Հ^մ 27, Պհպ. Աբ, ՄՄ Հ^մ 53, Պհպ. Աա, ՄՄ Հ^մ 91, Պհպ. Աա, ՄՄ Հ^մ 186, Պհպ. Աբ, ՄՄ Հ^մ 368, Պհպ. Աա, ՄՄ Հ^մ

376, Պհպ. Աա եւ այլն)¹³, «Ի գրեանց Լիմեցոյ Ստեփաննոս վարդապետէ, յիշատակ եղեալ յանապատն Սեւանո՛ւ առ ի յիշել զհոգիս իմ. հեռացուցանօղքն ի նոյն անապատէ հեռասցին ի խնամոցն Աստուծոյ, 1835, օգոստոս 25, Ստեփաննոս վարդապետ» (ՄՄ Հ^մր 28, Պհպ. Աբ, ՄՄ Հ^մր 79, Պհպ. Աբ եւ այլն), «Ի գրոց Լուսեղ Լալայեան, ի Նոր Նախիջեւան, 203» (ՄՄ Հ^մր 46, էջ 1), «Ի գրոց Սերովբեանց, Հ^մր 63: Ի տպարանի Ոսկանաց եպիսկոպոսի եւ Սողոմոնի, 1671 Ամստերդամ» (ՄՄ Հ^մր 253, էջ 3), «Ի գրոց Ք. Պատկանեան» (ՄՄ Հ^մր 310, Պհպ. Բա), «Ի գրոց Յուսիկ վարդապետի Մովսիսեան Մարգարի գիւղացոյ, միաբանի Սրբոյ Էջմիածնի, Հ^մր 172» (ՄՄ Հ^մր 326, Ա. կազմաստառ), «Ի գրոց Յուսիկ վարդապետի Մովսիսեան, թ. 170» (ՄՄ Հ^մր 358, տիտղթ.), «Հ^մր 73, ի գրոց Լ. Մարկոսեան» (ՄՄ Հ^մր 379, Պհպ. Աա), «Հ^մր 4. ի գրեանց Ն. Յ. Տէր-Շմաւօնեանց» (ՄՄ Հ^մր 387, էջ ք), «Հ^մր, Ի գրոց Սիմէովնի ծայրագոյն վարդապետի հայոց Մուշեղեանց» (ՄՄ Հ^մր 495, չհ. էջ 2):

Արձանագրութիւնների շարքում առանձնացրել ենք այնպիսիք, որոնք տուեալ գրքի վերաբերեալ առաջնային տեղեկութիւններ են տալիս՝ խորագիր, հեղինակ, տպագրութեան ժամանակ ու վայր, տպարանի անուանում՝ «Թոմա Գեմբացի, Գիրք Թօմայի Քեմփացոյ: Յաղագս համահետեւմանն Քրիստոսի, թարգմ. ի Յօհաննիսէ յոյովերախտ վարդապետէ Կոստանդինուպօլսեցոյ, յԱմստէլրօղամի, 1696» (ՄՄ Հ^մր 67, Պհպ. Գա), «Ամստրդամ, Ոսկան, 1668 թ.» (միակազմ 440, Ա. կազմաստառ), «Յիսուս Որդի, Վենետիկ, ՌՂԲ. (1643), տպ. Յովհ. Անկուրացի» (ՄՄ Հ^մր 120, Պհպ. Աա), «Ներսես Շնորհալի, Յիսուս Որդի, Ամստերդամ, 1661» (ՄՄ Հ^մր 129, Պհպ. Աա), «Գիրք, որ կոչի Յիսուս որդի, Նէրսես Կլայեցի, 1746 թ.» (ՄՄ Հ^մր 139, Պհպ. Աա), «Ժողովածու ասացեալ ի սրբոց վարդապետաց՝ շահ եւ օգուտ հոգոց եւ մարմնոց, առ ի ընթերցօղ եւ ունկնդրող անձանց հաւատացելոց, ՌՃԿԷ. (1718), Կ. Պօլիս, տպ. տրուպ Աստուածատուրի» (ՄՄ Հ^մր 154, Պհպ. Աա), «История Телемака сына Юлиса, часть первая, 1794 г.» (ՄՄ Հ^մր 161, էջ 2), «Առաքել Դաւրիժեցի, Գիրք պատմութեան, Ամստերդամ, 1669» (ՄՄ Հ^մր 325, Ա. կազմաստառ) եւ այլն. մէկ այլ դէպքում տպագիր ամբողջ տիտղոսաթերթ-յիշատակարանն է արտագրած՝ «Գիրք պատմութեան, որ կոչի Պղնձէ քաղաք, եւ բանք խրատականք եւ օգտակարք խիկարայ Իմաստնոյ, եւ այլ բանք պիտանիք, տպագրեցեալ ի հայրապետութեան գերագահ աթոռոյն Սրբոյ Էջմիածնի տեառն Դուկասու սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց եւ ի պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմի տեառն Յովակիմայ երջանկափայլ վարդապետի, վեհափառ հրամանաւ մեծի արքայանիստ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ սրբազան արհիեպիսկոպոսի տեառն Զաքարիայ ազգասէր կարդացեալ աստուածաբան պատրիարգի, ի թուին հայոց ՌՄՆԱ.

¹³ Գրեթէ բոլոր տպագրերում միեւնոյն բովանդակութեան են, շարադասութեան որոշակի ետուտաշոյութեամբ:

(1792), յունվար Լ., ի տպարանի Յօհաննիսի եւ Պօղոսի» (ՄՄ Հ^մ 86, Պհպ. Աբ):

Մի շարք տպագրերի Ա. կազմաստառին կան ուղեբեկն հետեւեալ գրութիւնները՝ «Шкаф 49 / полка № 17» (ՄՄ Հ^մ 339, Ա. կազմաստառ), «Шкаф, полка, № 9, № 85» (ՄՄ Հ^մ 31, Ա. կազմաստառ), «Шкаф, полка, 46, № 6» (ՄՄ Հ^մ 493, Ա. կազմաստառ) կրկին փաստելով որեւէ ընդհանուր գրադարանին պատկանելը:

Այսօրինակ նշումների մէջ ենք ներառել նաեւ Մատենադարանի գրադարանի նախկին վարիչ Ռայա Բլբուլյանին ուղղուած նամակ-յիշատակագրութիւնը, որը հաւանաբար որեւէ այլ գրադարանի աշխատակից է գրել՝ «Բուն Տոմար Հայոց, Պօլիս, 1740: Ռայա՛ ջան, ստուգի՛ր, միայն յիշատակարանը շունենք, 1-62 լրացուցիչ «Ի զբօսան հայկազունեաց»ը եւս շունի» (ՄՄ Հ^մ 33, չհ. էջ 65. պատճեն):

Ունենք նաեւ տպագրի վիճակին վերաբերող արձանագրութիւններ՝ «Վերակազմուած է 1981 թ. օգոստոս» (ՄՄ Հ^մ 86, Պհպ. Բբ), «Գնուած է 1953 թվ., Հ^մ 9453 ձեռագրի հետ միասին կազմուած, որից անջատուած է 1954 թվ., ստորագրութիւն» (ՄՄ Հ^մ 367, Պհպ. Աբ):

Արձանագրութիւնների շարքին ենք դասել նաեւ հետեւեալ բովանդակութեան նիւթերը՝

ա. Հեղինակին ուղղուած գովասանքներ՝ «Կեցցէ՛ Դաւիթ Անյաղթ փիլիսոփան, կեցցէ՛» (ՄՄ Հ^մ 479, Պհպ. Դա),

բ. Լեզուաբանական-փիլիսոփայական նշումներ, որոնք յաճախ կապ չունեն տուեալ հնատիպ գրքի բովանդակութեան հետ՝ «Յաղագս շաղկապի...» (ՄՄ Հ^մ 65, էջ 232), «Հոմանուն փ. յ. բ., թէպէտ վարդապետք ասեն աստուածային անունն...» (ՄՄ Հ^մ 133, Ա. կազմաստառ), «Սահման քերականութեան Սիմէոնին այսու ոճիւ առարի...» (ՄՄ Հ^մ 207, չհ. էջ 36), «Այս գրամատիքս սուրբ ժողովոյն շնորհեցեալ եղեւ Իսրայէլ սարկաւագին...» (միակազմ ՄՄ Հ^մ 218, Պհպ. Աաբ), «Յաղագս մակբայի...» (ՄՄ Հ^մ 251, Պհպ. Բա), «Յաղագս շաղկապի...» (ՄՄ Հ^մ 251, Պհպ. Բբ), «Եւ ձայնաւորացն երկարք են վեց՝ ա, է, բ, ի, ու, օ» (ՄՄ Հ^մ 252, էջ 16), «Բեղնատր – պտղատր, արդիւնատր կամ արգասատր...» (ՄՄ Հ^մ 294, էջ 4) եւ այլն,

գ. Դեղատոմսեր, բուժական աղօթքներ՝ «Ակուայի ճար է...» (ՄՄ Հ^մ 58, Պհպ. Դբ), «Որ լնտերն կերվել լինի, ա՛ն ոսկի գոնեի...» (ՄՄ Հ^մ 621, Բ. տախտակ), «Աղօթք գլխայցաւի եւ աշայցաւի...» (ՄՄ Հ^մ 258, էջ 116-117) եւ այլն,

դ. Բանահիւսական-գեղարուեստական նմուշներ. անեծք՝ «Մեռնի՛ս, հա՛յր Միքայէլ, որ Քաղքեդոնը ընդունիս» (ՄՄ Հ^մ 400, էջ 599)¹⁴, «Ով որ այս գիրքը

¹⁴ Յիշատակուած Միխայելը Չամչեանն է, տպագրում, բացի վերը բերուած յիշատակարանից, մի քանիսը եւս կան՝ «Չամչեանը կաթոլիկ է, լա գիտցի՛ք...» (էջ 5), «Հա՛յր Միխայէլ, քաղցր են պատմութիւնք քո, քաղցր յոյժ, իսկ եթէ յաճախակի չէր յիշեալ քո գծողովն քաղկեդոնեան, քաղցրագոյն լինէր մեզ, քան զխորիսխ մեղու...» (էջ 383), «Ափսո՛ս քեզ, հա՛յր Միխայէլ» (էջ 387):

չի կարդում, տեսնելով, որ կայ, նա հրէա է, ով կարդայ եւ չհաւանէ, հերետիկոս է, ով կարդայ, հաւանէ, նա քրիստոնեայ է» (ՄՄ Հ^մ 128, էջ 504), աղօթք՝ «Արի՛, Աստուած հարցըն մերոց, / որ ապաւէնդ ես նեղելոց, / հա՛ս յօգնութիւն ծառայից քոց, / անօգնական ազգիս հայոց, / Տէր ողօ[ր]մեաց, միջնորդութեամբ սրբոյ խաչին եւ անարատ սուրբ ծնողիդ յիշեա՛յ զհեղումն արեան Փր[կ]չին» (միակազմ ՄՄ Հ^մ 76, Ա. կազմաստառ), չափածո յիշատակարան-յիշատակագրութիւններ՝ «Արի՛ մ քաղցրիկ աղանի, / ոսկէ խնձոր զարմանալի, / քեզ տեսնողին բուր երանի, / դու որ եկիր մեզ ծագեցար» (ՄՄ Հ^մ 98, Պհպ. Աա), «Որ դպիր զիս ընթերցական, / եւ ոչ ունիս շորս աստիճան, / մի՛ կամիր դու ի տաս կանգնման, / ի մէջ մարդոց, որ [խ]իստ անբան» (ՄՄ Հ^մ 112, Պհպ. Աա), «Առ քեզ գոչեմ աղերսալի, / լե՛ր բարեխօս, սո՛ւրբ տիրուհի, / զիրս զազաք եւ ցնձալի, / գերագոյի եւ բաղձալի, / Աստուածածին սուրբ անարատ, / զքեզ աղաչեմ, կո՛յս տիրամայր» (ՄՄ Հ^մ 121, էջ շի.), «Այս զոյգ գրքուկս քերթութեան, / դրան լեզուիս մեր բացարան, / որ ստացուած էր իմ անձինս, / փցուն Յովսէփ սարկաւազիս, / սիրոյ նշան, սիրով նուիրի, / քանզի եղբօր լաւագունի, / համաստիճան սարկաւազի, / անձին համեստ Կարապետի, / որում տացէ Տէր վայելել / եւ զտկար եղբայրս իւր միշտ յիշել, / որում ահիւք, երկիր պագցուք / եւ յաւիտենից զփառս տացցուք, / հազար հարիւր թուին այս գործեալ, / հարիւր տասն եւ յաւելեալ» (ՄՄ Հ^մ 179, Պհպ. Դա), «է - Մեղօք աշխարիս շաղախեալ, / Մեւքոն գրիչս ունայնացեալ, / ի քաղաքն իմ Կարնի կոչեալ, / ի Բաբելոն պանդխտացեալ, / ի յօթնամեայ այսչափ կեցեալ, / Թարէզ քաղաքն եկել հասեալ, / ի վայելումն Մեւքոնին, / ընծայեցի Սողոմոնին / Յիսուս տացէ շնորհք կարգին, / ընթեռնելով գրոց բանալին, / ով ոք իմաստութեան ցանկա, / եւ Սուրբ Գրոց տեղեկանա, / եւ իմաստնոց դրունս գնա, / խոնարհութիւն արհեստ արա, / եթէ խոնարհութիւն ունիս, / համբակագունից յոյժ գովիս, / եթէ խոնարհութիւն չունիս, / հասարակաց ոչինչ կոչիս» (ՄՄ Հ^մ 206, չհ. էջ 2), «Յարութիւն դպիր արի, / պարկեշտ վարուք առաքենի, / հոգւոյ որդի վարդապետի, / ի Յարութիւն Թիլֆիզեցի, / զայս քերականութիւնս ետ քեզ սխրալի, / ի վայելումն անձինդ բարի, / զի հանապազ ինձ յիշելի, / հոգւոյ իմոյ տաս ողորմի, / Աստուած եւ քեզ ողորմեսցի» (ՄՄ Հ^մ 235, էջ 584), «Թաթ անեղին յամպն երեւի, / տառք հայկական նշանագրի, / յարգանդ մաքուր մեծ թարգմանչի, / սուրբ Մեսրոպայ վարդապետի» (ՄՄ Հ^մ 339, Պհպ. Աբ),

եւ Աշխարհագրական տեղեկութիւններ՝ «Յերոպիայ, յԱսիայ եւ ի Լիբիայ, յԵրոպիայ, որոյ ոմանքն այս են...» (ՄՄ Հ^մ 133, Բ. կազմաստառ),

զ. Տոմարական՝ «Ապրիլ, թէ լուսինն բակ առնու, ջուրք պակասին...» (ՄՄ Հ^մ 228, Պհպ. Աա-Բբ), «Մարտի ԻԴ. (24), թէ ամպ լինի եւ տարին բարի լինի, թէ պարզ լինի, սղութիւն լինի եւ չոր, այդ է ամէնայն» (ՄՄ Հ^մ 228, էջ 343),

է. Հմայական՝ «Այսօրք էն ամենայն շար աւուրք...» (ՄՄ Հ^մ 58, Պհպ. Բբ--Գա) եւ այլն:

Ինչպէս ձեռագրերում, հնատիպերում եւս յաճախ են հանդիպում կնքա-

գրողներ, ինչպէս գրադարանային, այնպէս էլ մասնաւոր անձանց¹⁵: Դրանք յիշատակարաններից ոչ պակաս օգնում են պարզել ոչ միայն տուեալ գրքի անցած ուղին՝ գիտական տարբեր հաստատութիւններին կամ տարբեր անձանց պատկանելը, այլեւ տեղեկութիւններ են տալիս տարբեր գրադարանների անցած ուղու՝ պատմութեան վերաբերեալ: Ինչպէս օրինակ, տպագրերում հանդիպում ենք Մաշտոցեան Մատենադարանի գրադարանի տարբեր ժամանակների երեք տարբեր կնքադրողներ, նոյնը նաեւ էջմիածնի Մատենադարանի դէպքում, որոնք վստահաբար կօգնեն այդ հաստատութիւնների գրադարանների պատմութիւնն ուսումնասիրելու ժամանակ: Այստեղ ներկայացնենք առաւել յաճախ հանդիպողները:

ա. Գրադարանային. Երեւանի Մատենադարան՝ մանուշակագոյն թանաքով եռանկիւն կնքադրող, որի վերին անկիւնում աստղ եւ նրանից դուրս եկող ճաճանչներ՝ «ՊԵՏ / ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ», կապոյտ թանաքով ձուածիր կնքադրող՝ «ՄԱՇՏՈՅՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ / ԳՐԱԴԱՐԱՆ», մանուշակագոյն թանաքով եռանկիւն կնքադրող, որի վերին անկիւնում աստղ՝ «ՊԵՏԱԿԱՆ / ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ», էջմիածնի Մատենադարան՝ կարմիր թանաքով ութանկիւն կնքադրող՝ «ԳԻՐՔ ԱՅՍ / ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԱ Է», կարմիր թանաքով ռճաւորուած քառանկիւն կնքադրող՝ «ԳԻՐՔՍ / ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԱ / ԳՐՔԱՏԱՆՆ Է / 1813», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրող՝ «ԿՆԻՔ / ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ / ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ / 1832», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրող՝ մէջտեղում բացուած գիրք, շուրջբոլորը՝ «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ Հ. ՃԵՄ. Մ. Ա. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ / 1874-88», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրող՝ «ԿՆԻՔ / ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ / ՍՐԲՈՅ / ԷՋՄԻԱԾՆԻ / 1888», կապոյտ թանաքով բոլորակ կնքադրող, որի մէջտեղում Սիսն ու Մասիսը՝ ներքեւում «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ / 1930 - ՌՅՀԹ.», շուրջբոլորը՝ «Հ. Ս. Խ. Հ. Լ. Ժ. Կ. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ», մանուշակագոյն թանաքով ուղղանկիւն կնքադրող՝ «ԵՋՄ. ՊԵՏ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ / ԳՆՌԻԱԾ / Հ՞՞՞ 1931 թ. 23/1 / Մ. Կարոյանից», կապոյտ թանաքով ուղղանկիւն կնքադրող՝ «ՀՍԽՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄ / ԷՋՄ ՊԵՏ / ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ», այլ գրադարան-մատենադարանների, ուսումնարանների՝ մանուշակագոյն թանաքով կնքադրող՝ «ԱՐԱՄԵԱՆ - ԱՐՈՎԵԱՆ / ՄԻԱՅԵԱԼ ԸՆԹԵՐՅԱՐԱՆ / BIBLIOTHEQUE, ARAMIAN - ABOVIAN / ԹԱՒԻԻՉ - TAURIS», մանուշակագոյն թանաքով ուղղանկիւն կնքադրող՝ «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ / ԿԱՐԱՊԵՏ / ԵՋԵԱՆԻ», կարմիր թանաքով ձուածիր կնքադրող, որի մէջտեղում Սեւանայ կղզին՝ վրան ճաճանչաւոր խաչ, իսկ շուրջը բաժանարար հաւասարաթեւ խաչով սկսուող՝ «ԿՆԻՔ ՍՐԲՈՅ ԱՆԱՊԱՏԻՆ ՍԵԻԱՆԱՅ», կանաչ թանաքով ձուածիր կնքադրող՝ «ՍՈՒՐԲ ԳԱՅԻԱՆԵԱՆ / ՄԻՋՆԱԿԱՐԳ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ / ՀԱՅ ՕՐԻՈՐԴԱՅ», սեւ թանաքով ձուածիր

¹⁵ Այս մասին առաւել մանրամասն կիսուենք կնքադրողների մասին առաջիկայում պատրաստելիք յօդուածում:

կնքադրոշմ «АРМЯНСКАГО / ЛАЗАРЕВЫХЪ / ИНСТИТУТЬ / ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ», սեւ թանաքով բոլորակ կնքադրոշմ՝ «ПЕЧАТЬ АРМЯНСКАГО ХАЛИБОВСКАГО УЧИЛИЩА» եւ այլն:

բ. Մասնաւոր անձանց, որոնք եւս կարելոր են այս կամ այն հոգեւոր հայրերի կենսագրական ստոյգ տուեալների պարզաբանման համար. հոգեւոր հայրերի՝ կարմիր թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝ «է/ ԴԱԽԻԹ ԿԱԹՈՂԻԿՈՍ / ՌՄԾ. (1801)», կարմիր թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝ «ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՌՄԾԹ. (1810)», կարմիր թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ԳՐԻԳՈՐ / ՎԱՐԳԱՊԵՏ», սեւ թանաքով բոլորակ կնքադրոշմ՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ՂՈՒՆԿԻ/ԱՆՈՍ ՎԱՐԳԱՊԵՏ / 1220 (1771)», սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝ «ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ / ՎԱՐԳԱՊԵՏ / 1220 (1771)», սեւ թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ՅԱԿՈՒՐ ՎԱՐԳԱՊԵՏ / 1830», սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝ «ՍՏԵՓԱՆՆՈՍ / ՎԱՐԳԱՊԵՏ / ՌՃՁԴ. (1735)», սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԷՐ / ԳԷՈՐԳ / 1810», սեւ թանաքով բոլորակ կնքադրոշմ՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ՏԻՐԱՅՈՒ / ԳՐԻԳՈՐ / 1202 (1753)» եւ այլն, անհատների, որոնք կարող էին լինել գրքերի տէրերը, նուիրատուները, գնորդները եւ ուրիշներ՝ սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ԱԼԷՔՍԱՆ / 1228 (1779)», սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ՅՈՎԱՆՆԷՍ / ՌՃԷ. (1658)», մանուշակագոյն թանաքով կնքադրոշմ՝ «АРШАКЪ ЛАЗАРЯНЪ / ТЕРЪ-МИКЕЛЯНЪ / ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՄԻՔԵԼԵԱՆ», մանուշակագոյն թանաքով կնքադրոշմ՝ «ИЗЪ КНИГЪ БАГРАТА № 29», մանուշակագոյն թանաքով ռճաւորուած եզրերով ձուածիր կնքադրոշմ՝ «Ի ՅԻՇԱՏԱԿ / ԻԿՂԱԲԵՐ / ՍԵՐՈՒԲԵԱՆ-ԻՆՃԻԿԵԱՆԻ / 23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ» (ՄՄ Հ^մ 253, Ա. կազմաստառ), սեւ թանաքով բոլորակ կնքադրոշմ, հայելային՝ «ԼԵՒՈՆ ԹԱԳԱՆՈՐ ՀԱՅՈՅ» (ՄՄ Հ^մ 390, էջ 332) եւ այլն:

Տպագիր գրքերի մի մասն ունի սկզբում, վերջում կամ կազմաստառներին սոսնձած ներմուծուած ներդիր մէկ կամ աւելի այլ տպագիր թերթեր, որոնք եւս ուսումնասիրում ենք, հնարաւորութեան դէպքում պարզում, թէ որ տպագրից է, քանի որ յաճախ դրանք լինում են անյայտ հրատարակութեան, անգամ միակ օրինակներ, կամ փորձնական տպագրութիւնների նախօրինակներ, որոնք պահպանուած են միայն մի քանի պատառիկով: Բերենք դրանցից մի քանիսը՝ Ա. եւ Բ. կազմաստառներին սոսնձած, Պհպ. Ա.-Բ. Գրիգոր Տաթեւացի, «Գիրք հարցմանց»-ի տպագիր թերթեր, Կ. Պոլիս, 1720 թ., էջ լե-լը. (ՄՄ Հ^մ 118), Ա. եւ Բ. կազմաստառներին սոսնձած, Պհպ. Ա. Խոսրով Անձեւացի, «Մեկնութիւն աղօթից»-ի տպագիր թերթեր, Կ. Պոլիս, 1730 թ., էջ 113, 243-4 (ՄՄ Հ^մ 185), Ա. եւ Բ. կազմերի ստուարաթղթի տակ սոսնձած անյայտ հրատարակութեան գրքի թերթեր, էջ 401, 429 (ՄՄ Հ^մ 244), Պհպ. Ա.-Դ. անյայտ հրատարակութեան Սաղմոսարանի թերթեր, էջ 259-60, 263-6, 269-70 (ՄՄ Հ^մ 249) եւ այլն: Ներդիր թերթերը տպագրերից բացի կարող են նաեւ ձեռագրի թերթեր լինել, ինչպէս

օրինակ 192րդ տպագրի Ա. եւ Բ. կազմաստաններին սոսնձած են ձեռագրի թերթեր, որոնց զգալի մասը թափուած է, ընթեռնելի են ընդամէնը մի քանի բառ:

**ԴԻԲՆԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՌՕՏ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԸՆԹԱՑՔԸ**

Այժմ համառօտ ներկայացնենք արուած եւ շարունակելիք աշխատանքը: Այսպէս՝ առաջին հերթին նշում ենք նոր եւ հին գոյքահամարները, այնուհետեւ Հնատիպ գրքի մատենագիտութեան¹⁶ համարը: Յաջորդ տողերում նշում ենք հեղինակի անունն ու գրքի վերնագիրը, ապա տպագրութեան վայրն ու տարեթիւը, եթէ յայտնի են:

Տպագրի վերաբերեալ հիմնական տեղեկութիւնները տալուց յետոյ անցնում ենք հիմնական նկարագրութեանը: Այսպէս՝ սկսում ենք մէջքին կամ առաջին կազմին առկայ ձեռագիր եւ տպագիր գոյքահամարների արձանագրումից, ապա յաջորդում են կազմաստանին, ներդիր պատառիկներին, տիտղոսաթերթին, անուանաթերթին, տպագրի բոլոր թերթերին՝ սկզբից մինչեւ վերջ առկայ գրադարանային նշումների եւ մեծ ու փոքր յիշատակարանների արձանագրումները: Դրանցից իւրաքանչիւրը մանրամասն նկարագրում է՝ սկսած թանաքի կամ մատիտի գոյնի, գրչութեան ձեւի ճշտումից մինչեւ ձեւի նկարագրութիւն (կնքագրողմաների դէպքում):

Հնատիպ գրքերի նկարագրութեան ժամանակ, բացի վերը նշուածներից, արձանագրում ենք անգամ ամենափոքր նշումները, որոնք առաջին հայեացքից գուցէ աւելորդ կամ անկարեւոր թուան, սակայն դրանք եւս հետագայում, արդէն դիւանի ամբողջական պատկերը տալիս կարեւոր են լինելու զանազան հարցերի պարզաբանման ժամանակ, ինչու չէ՞ նաեւ հետագայ ուսումնասիրողներին ուղղորդելու տարատեսակ հարցերի դէպքում:

Մատենադարանի գրադարանում կայ 2542 միաւոր հնատիպ գիրք, որոնք բովանդակում են 1512-1800 թթ. տպուած հայերէն գրքի շուրջ 900 անուն (տուեալները 2022 թ. յուլիսի դրութեամբ):

Արդէն հինգ եւ աւելի տարի Մաշտոցեան Մատենադարանում սկսուել է տպագիր գրքի ձեռագիր յիշատակարանների եւ գրադարային նշումների նկարագրման աշխատանքը, որի ընթացքում կարողացել ենք պատրաստել 500 միաւոր տպագիր գրքի նկարագրութիւն¹⁷:

¹⁶ Ն. Ոսկանեան, Ք. Կոբկոտեան, Ա. Սապլեան, Հայ գիրքը 1512-1800 թթ.:

¹⁷ Նշենք, որ այսպիսի աշխատանք անում է նաեւ Հայաստանի Ազգային գրադարանի Ան-ձեռնմխելի գրականութեան բաժնի Հնատիպ գրականութեան ենթաբաժնի աշխատակից Սուսաննա Նահապետեանը: Յուսով ենք, որ հետեւելով Ազգային գրադարանի եւ Երեւանի Մատենադարանի օրինակին՝ այսօրինակ աշխատանք կնախաձեռնեն նաեւ հնատիպ գրքերի խոշոր հավաքածու ունեցող միա գրադարանները. այսպիսով կստանանք հնարաւոր չափով ամբողջական դիւան: Քանի որ տարբեր մատենադարանների, գրադարանների ու

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Առաւել քան հակուած ենք մտածելու, որ այս դիւանի պատրաստումը մասնակիօրէն կարելի է համեմատել ձեռագրացուցակի, նաեւ ձեռագրերի յիշատակարանների ժողովածուների հետ եւ վստահ լինել, որ այն եւս արդէն վերջնական ամփոփումից ու հրատարակումից յետոյ նպաստաւոր կլինի ուսումնասիրողին տպագիր գրքի պատմութեան քննութեան եւ ոլորտի զանազան հարցերի յստակեցման ու պարզաբանման գործում: Ձեռագրերի յիշատակարանների ժողովածուների կողքին այս ժողովածուն եւս աղբիւրագիտական կարեւոր ու հարուստ նիւթ է հայ մշակոյթի պատմութեան ուսումնասիրութեան համար: Այս աշխատանքով ցանկանում ենք դիւրացնել հետազօտողի գործը՝ նրան տալով մինչ այժմ անմատչելի նիւթեր՝ կանոնակարգուած, ճշգրտուած զանազան ծանօթագրութիւններով:

Աշխատանքի կարեւորութիւններից մէկն էլ այն է, որ մինչ այժմ հնատիպ գրքի ձեռագիր յիշատակարանների այս հարուստ ժառանգութիւնը, որը դարերի ընդգրկում ունի, չի հրատարակուել եւ չի ենթարկուել համակողմանի ուսումնասիրման, անգամ ցուցակագրում երբեւէ չի արուել: Յայտնի է միայն Նորայր Պողոսեանի աշխատութիւնը, որտեղ ուսումնասիրուած են ժԶ-ԺԷ դարերի լեզուական առանձնահատկութիւններն՝ ըստ հայ հնատիպ գրքի ձեռագիր յիշատակարանների¹⁸: Փաստենք, որ ի տարբերութիւն ձեռագիր մատենաներում առկայ յիշատակարանների, հնատիպ գրքի տպագիր յիշատակարաններն առանձնապէս ուշադրութեան չեն արժանացել. պարզապէս հրատարակուել են Հայ հնատիպ գրքի մատենագիտութեան մէջ (1512-1800 թթ.), այն էլ յաճախ յապաւուած:

Այս յիշատակարանները կարող են աղբիւր լինել նաեւ ժամանակի լեզուի ուսումնասիրման համար: Որքան էլ նրանց գրիչներից շատերին չի յաջողուել գրել գրագէտ հայերէնով, եւ օգտագործել են խօսակցական լեզուի բազմաթիւ տարրեր, գաւառական այս կամ այն խօսուածքին բնորոշ դարձուածքներ ու եզրեր, սրանք միջնադարեան խօսակցական լեզուի ուսումնասիրման համար եւս կարող են արժէքաւոր տեղեկութիւններ տալ:

թանգարանների հնատիպ գրքերի բազում արժէքաւոր յիշատակարաններ մինչ օրս անմատչելի են ուսումնասիրողների համար:

¹⁸ Ն. Պողոսեան, նշ. աշխ.:

TATEVIK MANUKYAN, KNARIK SARGSYAN

**HANDWRITTEN AND LIBRARY NOTES IN THE EARLY PRINTED BOOKS
OF MESROP MASHTOTS MATENADARAN
(GENERAL PICTURE)**

Key words: Early printed book, manuscript, colophon, inventory number, rubber stamp, library note, publisher, genealogical record.

The Armenian early printed book co-existed with the manuscript for a long time. When printing a book, the publishers and authors, as a rule, produced it following the traditions of manuscript copying, which included colophons. The colophons contain detailed information about the circumstances of the preparation and promotion of the book, the publisher, typography, author, translator and time of publication. Early printed books, besides printed colophons, contain small and large handwritten ones, which provide information not only about the printing process but also about the historical background and events of that period. Moreover, one may also see unknown literary pieces. The information gives the researcher a clearer notion about the book, whether it belonged to an academic organization or an individual before finding place in Matenadaran. The authors of colophons, both in manuscripts and early printed books, were owners, buyers, commissioners, donors and restorers who, in addition to mentioning historical events or various domestic scenes, also left genealogical records about their families and kin.

In addition to handwritten colophons, library notes are also important for tracing the path of early printed books. Under the general title of library notes, we have conventionally highlighted the following types:

a. inventory number, b. different protocols, c. rubber stamp (library and personal).

As of July 2022, there are 2,542 copies of early printed books in the library of Matenadaran, which cover about 900 titles printed from 1512 to 1800.

The project of the description of handwritten colophons and library notes in early printed books of Matenadaran started more than five years ago. We have already prepared 500 descriptions. The preparation of this corpus can be partially compared with manuscript catalogues and collections of manuscript colophons. It will be useful for studying the history of printed books and clarifying various related issues. The corpus will also be an important and rich source material for the study of the history of Armenian culture in general.

ТАТЕВИК МАНУКЯН, КНАРИК САРГСЯН**РУКОПИСНЫЕ И БИБЛИОТЕЧНЫЕ ЗАПИСИ СТАРОПЕЧАТНЫХ
КНИГ МАТЕНАДАРАНА ИМ. МЕСРОПА МАШТОЦА
(ОБЩАЯ КАРТИНА)**

Ключевые слова: Старопечатная книга, рукопись, колофон, инвентарный номер, штамп, библиотечная запись, издатель, генеалогическая запись.

Армянская старопечатная книга долгое время сосуществовала с рукописной. Издатели и авторы, как правило, составляли ее, следуя традициям создания рукописей, в частности – снабжали ее колофоном. Колофоны содержат подробную информацию об обстоятельствах создания и процессе написания книги, издателя, типографии, переводчике, авторе и времени. В старопечатных книгах, кроме печатных колофонов, встречаются малые и большие рукописные колофоны, которые дают информацию не только о печатном процессе, но и об исторических реалиях и событиях этого периода, иногда содержат и неизвестные образцы художественного творчества. Информация помогает исследователю составить более четкое представление о данной книге и позволяет установить, принадлежала ли она научной организации или личной библиотеке до поступления в Ереванский Матенадаран. Авторами колофонов, как в рукописях, так и в старопечатных книгах, были в основном одни и те же люди: владельцы, покупатели, заказчики, дарители и реставраторы, которые, помимо изображения исторических ситуаций и различных бытовых сцен, вели записи о своих семьях и родах.

Библиотечные пометы также важны для отображения пути передвижения старопечатных книг. Общим названием «библиотечные пометы» мы обозначаем: а. инвентарный номер, б. различные протоколы, в. штамп (библиотечный и личный).

В библиотеке Матенадарана хранится 2542 армянские старопечатные книги, которые охватывают около 900 наименований книг, напечатанных с 1512 по 1800 годы (данные на июль 2022 г.).

Уже более пяти лет в Матенадаране имени Маштоца ведется работа по описанию рукописных колофонов и библиотечных записей старопечатных книг, в ходе которой удалось подготовить 500 описаний печатных книг. Несомненно, корпус будет полезен исследователям при изучении истории печатной книги. Наряду со сборниками рукописных колофонов он станет важным источником для изучения истории армянской культуры.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

Ազատ Բոզոյան

Անտիոֆի դերը Լևոն Մեծագործի ֆաղափականության մեջ..... 5

Կարեն Մաթևոսյան

Ռուսի սուլթանության հակաթոռ կաթողիկոս Անանիան 22

Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընծաները
հայ-մոնղոլական հարաբերություններում 40

Էլինա Ղազարյան

Հարավային Կովկասի ֆաղափների դերը տարանցիկ
առևտրում ըստ Ժ.-ԺԴ. դարերի պարսկական և արաբական
պատմաաշխարհագրական երկերի 60

Գեորգի Միրզաբեկյան

1590 թ. Մելիֆ-Արալանլուի օսմանյան հարկացուցակը..... 74

Հայկազ Հովհաննիսյան

Մատենադարանի Ալ. Երիցյանի արխիվ. «Հյուսիսսփայլ» ամսագրի
հրատարակման նախապատմությունը..... 83

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Գևորգյան

Գրիգոր Բ. Վկայասերի նախաձեռնած թարգմանական շարժումը 93

Դոնարա Կարապետյան

Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» բժշկարանի
գրավոր աղբյուրները..... 113

Աննա Օհանջանյան

Դավանանքից դավանաբանական անցնելով. հայ կաթողիկ Հովհաննես Մշեցին և նրա
հեղինակած «Բանալի նշմարտութեան» գիրքը (անգլերեն)..... 131

ԱՐՎԵՍ

Ավետ Ավետիսյան

«Իսահակի զոհաբերության» պատկերագրական տարբերակներ
հայկական մանրանկարներում..... 166

Սեդա Մանուկեան

Բոնաշէնի մանրանկարչութեան մի օրինակ (Մատենադարանի ձեռ. 10789)..... 199

Աննա Արեշատյան

Դիտարկումներ Մակար Եկմայանի և Կոմիտասի դաշնակաձ պատարագի
մոնոդիաների մեղեդիական մտածողության շուրջ..... 212

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Անի Առաքելյան

Սուլեյման Դարաշամբեցի կատակերգակը և նրա նորահայտ երկերը..... 233

Լուսինե Թումանյան

Հովհաննես Բրգութենցի գանձերն ու տաղերը 268

Հասմիկ Կիրակոսյան

Նորահայտ մի փաստաթուղթ Շուշիում ավետարանական ֆարոգիչների
գործունեության մասին 295

Միհրան Մինասեան

Մշոյ Ս. Առաքելոց, Մատնավանք և Ս. Յովհաննէս վանքերու թեմական
գիւղերու, Բասենի ու Թախթի հայկական եկեղեցիներու, վանքերու և
գերեզմանատուններու անտիպ ցուցակ (1861-1866 թթ.)..... 305

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գեորգ Տէր-Վարդանեան

Հայերէն հնատիպ գրքերի ձեռագիր գրառումների և գրադարանային
նշումների Դիւանի կազմութեան ծրագիրը 321

Տաթևիկ Մանուկեան, Քնարիկ Սարգսեան

Մաշտոցեան Մատենադարանի հնատիպ գրքերի ձեռագիր և
գրադարանային նշումները (ընդհանուր պատկեր) 330

Հերմինէ Գրիգորեան

Յուցակ կիսաբունի կիպլէնկէան թանգարանի հայերէն ձեռագրերի 350

ԲԱՆԱՎԵՃ**Նարինէ Վարդանյան**

«Կանոնագիրք հայոց» ժողովածուի զարգացման պատմությունը. ուսումնասիրություն, թե՞ խեղաթյուրում 377

ՀԱՂՈՐԴՈՒՄ**Մանեա Էննա Շիրինյան**

Բյուզանդագետների համաշխարհային XXIV համաժողովը 420

ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ**Նազենի Ղարիբյան**

Վասն կենաց եւ գործոց Նինայի Գարսոյեան (1923-2022) 432

ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ

ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ 438

CONTENTS

HISTORY

Azat Bozoyan

The Role of Antioch in the Policy
of Levon the Magnificent5

Karen Matevosyan

Anticatholicos Anania of the Sultanate of Rum22

Gagik Danielyan

Official Correspondence and Diplomatic
Gifts in the Armenian-Mongol Relations (part 3).....40

Elina Ghazaryan

The Role of South Caucasian Towns
in Transit Trade According to the Persian and Arabic
Historico-Geographical Works of 10th-14th Centuries.....60

Georgi Mirzabekyan

The Ottoman Tax Register of Melik-Arslanlu of 1590.....74

Haykaz Hovhannisyan

Matenadaran, Archive of Al. Yeritsyan: Prehistory
of the Publication of the Journal “Nortern Lights”.....83

PHILOLOGY

Davit Gevorgyan

The Translational Movement Initiated by Grigor II V kayaser.....93

Donara Karapetyan

The Written Sources of Asar Sebastats‘i’s
Book of Medical Art.....113

Anna Ohanjanyan

Jumping In and Out of Confessions: The Armenian Catholic Yovhannēs
of Mush and his Book *Key of Truth*.....131

ART

Avet Avetisyan

The Iconographic Versions of *the Sacrifice Of Isaac*
in Armenian Miniatures.....166

Seda Manukyan

A Specimen of the Břnashen Miniature Art..... 199

Anna Arevshatyan

Observations on the melodic thinking in
the monodies of the Liturgy in the arrangements
by Makar Yekmalian and Komitas..... 212

PUBLICATIONS**Ani Arakelyan**

Comedian Suleiman Darashabets‘i and
His Newly Discovered Poems..... 233

Lusine Tumanyan

The Litanies and Odes of Yovhannēs Brgut‘Ents‘..... 268

Hasmik Kirakosyan

A Recently Discovered Document about the Activity
of Evangelical Missionaries in Shushi..... 295

Mihran Minassian

A Previously Unpublished List of Diocesan Villages of the
Monasteries of Surp Arakelots in Mush, Madnavank and Surp Hovhannes,
as well as Armenian Churches, Monasteries and Cemeteries
of Pasen and Takht (1861–1866)..... 305

BIBLIOGRAPHY**Georg Ter-Vardanean**

The Program of Composing the Corpus of
Handwritten Remarks and Library Notes in
Armenian Early Printed Books..... 321

Tatevik Manukyan, Knarik Sargsyan

Handwritten and Library Notes of Early Printed Books
of Mesrop Mashtots Matenadaran (General Picture)..... 330

Hermine Grigoryan

Catalogue of the Armenian Manuscripts of the
Gulbenkian Museum in Lisbon..... 350

DISCUSSION**Narine Vardanyan**

History of the Development of the Armenian Book of Canons.

Study or Misrepresentation?.....377

REPORT**Manea Erna Shirinian**

The XXIV International Congress of Byzantine Studies.....420

OBITUARY**Nazenie Garibian**

The Life and Work of Nina Garsoïan (1923-2022).....432

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Азат Бозоян	
Роль Антиохии в политике Левона Великого.....	5
Карен Матевосян	
Антикатоликос румского султаната Анания.....	22
Гагик Даниелян	
Официальная переписка и дипломатические дары в армяно-монгольских отношениях (часть 3).....	40
Элина Казарян	
Роль Городов Южного Кавказа в транзитной торговле по данным персидских и арабских историко-географических трудов X-XIV веков.....	60
Георгий Мирзабекян	
Османский налоговый реестр Мелик-Арсланлу 1590 г.	74
Айказ Оганесян	
Матенадаран, архив Ал. Ерицяна: Предыстория издания журнала “Северное сияние”.....	83

ФИЛОЛОГИЯ

Давид Геворгян	
Переводческое движение, начатое Григором II Вкаясером.....	93
Донара Карапетян	
Письменные источники лечебника Асара Себастици “Книга врачебного искусства”.....	113
Анна Оганджян	
Переходя из одной конфессии в другую: армяно-католик Ованес из Муша и его книга «Ключ истины».....	131

ИСКУССТВО

Авет Аветисян	
Иконографические варианты “Жертвоприношения Исаака” в армянских миниатюрах.....	166
Седа Манукян	
Образчик брнашенской школы миниатюры.....	199
Анна Аревшатян	
Наблюдения над мелодическим стилем монодий литургии в многоголосных обработках Макара Екмаляна и Комитаса.....	212

ПУБЛИКАЦИИ

Ани Аракелян

Сатирик-комик Сулейман Дарашамбский и его неизвестные стихотворения..... 233

Лусине Туманян

Гандзы и таги Ованеса Бргутенца 268

Асмик Киракосян

Новонайденный документ, описывающий деятельность евангелических миссионеров в Шуши 295

Мигран Минасян

Ранее не публиковавшийся список епархиальных сёл монастырей Сурб Аракелоц, Матнаванк и Сурб Ованес, а также армянских церквей, монастырей и кладбищ Басена и Тахта (1861-1866 гг.)..... 305

БИБЛИОГРАФИЯ

Геворг Тер-Варданян

Программа составления свода рукописных записей и библиотечных заметок на старопечатных армянских книгах 321

Татевик Манукян, Кнарик Саргсян

Рукописные и библиотечные записи старопечатных книг Матенадарана им. Месропа Маштоца (общая картина)..... 330

Эрмине Григорян

Каталог армянских рукописей, хранящихся в музее Гюльбенкяна в Лиссабоне 350

ДИСКУССИЯ

Нарине Варданян

История развития “Армянской Книги канонов”. Исследование или искажение фактов? 377

СООБЩЕНИЕ

Манеа Эрна Ширинян

XXIV всемирный конгресс византинистов 420

НЕКРОЛОГ

Назени Гарибян

Жизнь и деятельность Нины Гарсоян (1923-2022)..... 432

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 34

BULLETIN OF MATENADARAN

Volume 34

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 34

Համակարգչային ձևավորումը և էչադրումը՝ Անահիտ Խանգադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝
Սրբազրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 28

տպամանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ք. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի քվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/